



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 3 ՆՈՂԵՄԲԵՐ, 2014

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՐԹԹԵ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 97

ՑՆԾԱ՝ ԱՇԽԱՐՀ, ՏԷՐԸ ԿՐ ԹԱԳԱԻՈՐԷ

Տէրը կը թագաւորէ, ցնծա՝, աշխարհ,
ուրախացէք, դուք՝ կղզիներ:
Թանձր անպով պարուրուած է ան,
բայց իր իշխանութիւնը հաստատուած է
արդարութեան եւ իրաւունքի վրայ:
Իր առջեւէն իր կրակն է որ կ'երթայ,
եւ կ'այրէ իր շուրջ գտնուող հակառակորդները:
Իր փայլակները աշխարհը կը լուսաւորեն,
իսկ երկիրը կը տեսնէ ու կը սարսի:
Լեռները մոմի մման կը հալին Տիրոջ դիմաց,
որ Տէրն է ամբողջ աշխարհին:
Ամօթով պիտի մնան անոնք՝ որ կուռք կը պաշտեն,
ոչնչութիւն եղող կուռքերով կը պարծենան:
Դուք՝ ո՛վ Տէրը սիրողներ, ատեցէք չարութիւնը.
Տէրը կը պահէ անոնք՝ որոնք իրեն հաւատարիմ են,
զանոնք կ'ազատէ ամբարիշտներու ձեռքէն.
Լոյս կը ծագեցնէ արդարներուն վրայ,
ուրախութիւն կու տայ անոնց՝ որոնք սրտով ուղիղ են:
Ուրախ եղէք Տիրոջմով, ո՛վ արդարներ,
եւ գոհութիւն յայտնեցէք՝ յիշելով անոր սրբութիւնը:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՐԹԹԵ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխահիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն էս նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՐԹԹԵ

*Պահապան ամենայնի Գրիստոս,
աջ եւ հոգիների լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ եւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԹԸ



ԵԼԻՑ ԺԱ ՉԼՈՒԽ



ԱՆՂՐԱՆԻԿՆԵՐՈՒ ՄԱՀԸ (11 գլխ)

Պարմութիւնը կը շարունակուի: Անցնող իննը հարուածներու ճամբով Աստուած ուզեց ցոյց տալ Ինքզինք, որպէսզի անով Փարաւոնը զգաստութեան հրաւիրէ, մի գուցէ դարձի գայ, զոչայ ու ապաշխարէ, եւ Տէրը փրկէ: Նաեւ այս հարուածներով ցոյց տալու Փարաւոնին եւ ամբողջ Եգիպտոսի ժողովուրդին, թէ իրենց պաշտած աստուածները ոչնչութիւն են: Ի վերջոյ, այս հարուածներու ճամբով ազատելու Իսրայէլի ժողովուրդը Եգիպտոսի ստրկութենէն: Հակառակ անոր, որ կարծէք Փարաւոնը սկսաւ մեղմանալ, բայց երբեք չ'արքայօնեց, որ Իսրայէլի ժողովուրդը երթայ պաշտելու համար զԱստուած: Ահա այդ իսկ պարճառով մնաց մէկ հարուած եւս, որմէ ետք պիտի արքայօնէր, եւ այդ հարուածը անդրանիկներուն մահն էր, եւ այս պարագային բոլոր անդրանիկներուն մարդ թէ կենդանի:

Այնպէս ինչպէս նախորդ հարուածներու պարագային, այս գլխուն մէջ եւս կը յիշուի որ Աստուած խտրութիւն կը դնէ Եգիպտացիներուն եւ Իսրայէլի միջեւ: Խտրութիւնը անոր համար, որպէսզի ցոյց տայ, որ պարահաճը սովորական երեւոյթ չէ: Պարահաճը բոլորին համար չէ: Պարահաճը յարուսկ նպատակով է: Ի վերջոյ, պարահաճին մէջ Աստուծոյ մարդ կայ:

Մէկ այլ ուրիշ արտայայտութիւն մը, որ նախապէս ալ ըսուեցաւ Մովսէսին տակաւին այս դէպքերը չպարահաճ (3:21-22): «**Ամէն մարդ իր դրացիէն, ու ամէն կին իր դրացիէն արծաթեղէն ու ոսկեղէն զարդեր թող խնդրէ**»: Տէրը շնորհք տուաւ ժողովուրդին Եգիպտացիներուն առջեւ: Այն արեւն բացարարութիւնը փրուեցաւ, թէ այս երեւոյթը մուռացկանութիւն չէ, ոչ ալ կողոպուտ, գողութիւն, այլ՝ փոխհարուցում: Սա կը նշանակէ, որ անցնող 430 տարիներու ստրկութեան դիմաց հարուցում: Այսինքն, այս ձեռով ցոյց կը տրուի Աստուծոյ արդարութիւնը: Որովհետեւ այդ ժողովուրդին կրած նեղութեան դիմաց ո՛վ պիտի հարուցանէ: Ո՛վ պիտի անոնց դարձը տեսնէ ու պաշտպանէ: Այնպէս կը թուի յաճախ, որ չարագործը, անօրէնը պիտի մնան ու կը մնան անպարտիժ, բայց ահա Աստուծոյ քով բան մը չի կորսուիր: Միւս կողմէ, Եգիպտացիները ուրիշի բռնութեամբ ունեցան այդ արծաթն ու ոսկին: Տակաւին, եթէ կ'ուզենք ալ ատելի խորանալ, պիտի տեսնենք, որ այդ ոսկին ու արծաթը իրենցը չէ, այլ՝ Աստուծոյն, ինչպէս պիտի ըսուի Անգեայ մարգարէի ճամբով. «Ոսկին ու արծաթը իմն են» (2:8): Սա կը նշանակէ, թէ Աստուած Ինքն է Տէրը ամէն ինչին, մեզի կը փրուին այդ բոլորը, մեր սեփականութիւնը չեն, մանաւանդ երբ այդ բոլորը ձեռք բերուած են բռնութեամբ, եւ ոչ արդար վաստակով: Ահա այդ իսկ պարճառով, եթէ մինչեւ հիմա կը կարծուէր թէ այդ ոսկին ու արծաթը Եգիպտացիներուն էր, բայց այսօր Տէրը կ'առնէ եւ կու տայ Իսրայէլի ժողովուրդին: Կարելի է այս երեւոյթը նմանցնել Քրիստոսի մէկ առակին «մամոնայէն ձեզի բարեկամներ ապահովեցէք» (Ղուկաս 16:9), որպէս միջոց օգտագործելու եւ ոչ որպէս նպատակ:

«**Կէս գիշերին Եգիպտոս պիտի ելլեն**»: Հերաքրքրական արտայայտութիւն մըն է: Ո՛վ է ելլողը: Ե՛րբ է որ պիտի ելլէ: Եւ ինչո՞ւ պէտք է ելլէ: Ելլողը Աստուած Ինքն է: Կէս գիշերին պիտի ելլէ: Ինչո՞ւ կէս գիշերին: Ընդհանրապէս կէս գիշերին տեղի կ'ունենան կարեւոր անցուդարձեր: Կէս գիշերին ձեռքաւկալեցին Քրիստոսը: Նաեւ կէս գիշերին եկաւ Փետան փասը կոյսերու առակին մէջ: Եւ ահա կէս գիշերին Աստուած պիտի ելլէ Եգիպտոսի վրայ վերջին հարուածը տալու, որ այս պարագային անդրանիկներուն մահն է:

Անգամ մը եւս կարելի է յիշել, որ այսպէղ ներկայացուած այս փասը հարուածները ուղղուած Փարաւոնին, զինք դարձի բերելու նպատակով եւ անով ազատ արձակելու Իսրայէլի ժողովուրդը ստրկութենէն, կարելի է նմանցնել նաեւ մեր վիճակին, ուր մեր մարմինները ըլլան կարծէք Փարաւոնը, իսկ հոգին՝ Իսրայէլի ժողովուրդը: Աստուած կ'ուզէ որ այդ հոգին ազատ արձակուի մարմնական ու մեղքի ստրկութենէն երթալու եւ զԱստուած պաշտելու, բայց մարմինը իր ցանկութիւններով ու մեղքը, Փարաւոնի նման, արգելք են ու չեն ուզեր որ հոգին երթայ: Ահա Աստուծոյ փրկած հարուածները զգուշացում ու հրաւեր կոչ են, որպէսզի անդրադառնանք ու ազատ արձակենք հոգին որպէսզի զԱստուած պաշտէ: